ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-608[1]-31.05.2023,08.09.2023-ԱռՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի 47[1]-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում եւ սանհանգույցներում՝

առաջացնում է բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների համար տուգանքի նշանակում՝ տեղադրված յուրաքանչյուր տեսալուսանկարահանող սարքի դեպքում, սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ստացված տվյալների օգտագործման եւ պահպանման կարգի խախտումը՝

առաջացնում է բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների համար տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մարտի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-608[1]-31.05.2023,08.09.2023-ԱՊՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի 47[1]-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում եւ սանհանգույցներում՝

առաջացնում է բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների համար տուգանքի նշանակում՝ տեղադրված յուրաքանչյուր տեսալուսանկարահանող սարքի դեպքում, սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ստացված տվյալների օգտագործման եւ պահպանման կարգի խախտումը՝

առաջացնում է բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների համար տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ~~հունվարի~~ մարտի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-608-31.05.2023-ԱոՀ-011/0) և <<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-608[1]-31.05.2023-ԱոՀ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	<<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-608-31.05.2023-ԱոՀ-011/0) *ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ*	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 7.1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հասարակական կարգի պահպանման, ուսումնական և գիտական, պացիենտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, ինչպես նաև պացիենտների այլ իրավաչափ շահերի պաշտպանության նպատակներով բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու դեպքում դրանք օգտագործվում են կառավարության սահմանած կարգով:»	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ: Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 7.1-ին հոդվածի 1-ին մասը խմբագրվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-608-	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 7.1-ին հոդվածի 4-րդ մասը՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ստացված տվյալները պահպանվում են սույն հոդվածի 1-ին մասում	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	Ընդունվել է:

	31.05.2023-ԱՈՀ-011/0) *ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ*	նշված կառավարության սահմանած կարգին համապատասխան:»		
ՀՀ կառավարություն	<<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-608-31.05.2023-ԱՈՀ-011/0) *ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ*	Նախագծի կարգավորումներով պայմանավորված, առաջարկվում է Նախագծում նախատեսել անցումային դրույթ՝ դրանում նախատեսելով լիազոր մարմնի կողմից ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետները՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջները:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է: Օրենքն ուժի մեջ մտնելու անցումային դրույթը լրացվել է՝ << Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է մինչև 2024 թվականի հունվարի 1-ը:>> նախադասությամբ:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (*Պ-608[1]-31.05.2023-ԱՈՀ-011/0*) օրենքի նախագիծ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի «471.» թիվն առաջարկվում է փոխարինել «47[1]» թվով:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	Ընդունվել է:

.